

Գավառի պետական համալսարանի
2021 թվականի նոյեմբերի 11-ի ռեկտորատի նիստի
արձանագրություն թիվ 19

ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ ինստիտուցիոնալ /ենթակառուցվածքային/ հավատարմագրման գործընթացի մասին /զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի մասին /զեկուցող՝ ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների դեկաններ/
3. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2021թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լուծարային շրջանի մասին /զեկուցող՝ ԳՊՀ ՀՈԻՖ փոխդեկան Մ. Գարեյան/
4. ԳՊՀ ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքի մասին /զեկուցող՝ ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների դեկաններ և հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան/
5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին**–ԳՊՀ ինստիտուցիոնալ /ենթակառուցվածքային/ հավատարմագրման գործընթացի մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/:

Զեկուցողը ներկայացրեց, որ մեկնարկել է Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ /ենթակառուցվածքային/ հավատարմագրման գործընթացը, որի շրջանականերում ս.թ. նոյեմբերի 20-ից 23-ն ընկած ժամանակահատվածում բուհ կայցելի ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի արտաքին գնահատման փորձագիտական խումբը: Այցելությունների ընթացքում նախատեսվում են հանդիպումներ ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամների, ստորաբաժանումների, դեկավարների, դեկանների, ամբիոնի վարիչների, դասախոսական, ուսանողական կազմի, շրջանավարտների և գործատուների հետ:

2. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեց առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի առցանց դասերի ընթացքի, ուսանողների մասնակցության վերաբերյալ ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2021թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լուծարային շրջանի մասին:

/Ձեկուցող՝ ԳՊՀ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Գարեյան/

Ներկայացվեց ամփոփ տվյալներ ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում լուծարային շրջանի անցկացման մասին:

4. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքի մասին:

/Ձեկուցող՝ ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների դեկաններ և հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

5. Ընթացիկ հարցեր:

Լսեցին-Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից ԳՊՀ ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման համար փաստաթղթային փաթեթների հավաքագրման և ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացման հարցը:

Որոշեցին.

1. Ապահովել ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի արտաքին գնահատման փորձագիտական խմբին ԳՊՀ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով, բուհի ինքնավերլուծության զեկույցում նշված համապատասխան կանոնակարգերով, այլ նյութերով:
2. Հետևել սովորողների կողմից ուսման վարձերի՝ սահմանված ժամկետներում վճարումների կատարման գործընթացին:
3. Հետևողական աշխատանք իրականացնել Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից ԳՊՀ ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման նպատակով փաստաթղթային փաթեթների պատրաստման և ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացման նպատակով:

Ռեկտոր՝

Քարտուղար՝

Ռ. Հակոբյան

Ք. Հայրապետյան

Գավառի պետական համալսարանի
2021 թվականի նոյեմբերի 6-ի ռեկտորատի նիստի
արձանագրություն թիվ 18

ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /զեկուցող՝ ԱՔ բաժնի վարիչ Թ. Խաչիկյան/

2. ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /զեկուցող՝ ՄՌԿ բաժնի վարիչ Խ. Սաֆարյան/

3. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի մասին /զեկուցող՝ ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների ղեկաններ/

4. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2021թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լուծարային շրջանի մասին /զեկուցող՝ ԳՊՀ ՀՈԻՖ փոխդեկան Մ. Գարեյան/

5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացման մասին:

/Զեկուցող՝ ԱՔ բաժնի վարիչ Թ. Խաչիկյան/

Զեկուցողը նշեց, որ բաժինն աշխատանքները կազմակերպել է ըստ 2020-2021 թթ. ԳՊՀ գործողությունների պլանում նշված առաջնահերթությունների, ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի կանոնակարգում նախատեսված հիմնական ուղղությունների հաշվառմամբ:

2. **Լսեցին** – ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացման մասին:

/Զեկուցող՝ ՄՌԿ բաժնի վարիչ Խ. Սաֆարյան/

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվետու ուստարում ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները վերանայվել են, բաժնի կողմից կատարվել է յուրաքանչյուրի գործառույթների և պատասխանատվության ճշգրտում:

3. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների դեկաններ/
Ներկայացվեց առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի առցանց դասերի ընթացքի, ուսանողների մասնակցության վերաբերյալ ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2021թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լուծարային շրջանի մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Գարեյան/
Ներկայացվեց ամփոփ տվյալներ ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում լուծարային շրջանի անցկացման մասին:

5. Ընթացիկ հարցեր:

Լսեցին – Ընթացիկ հարցեր:

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Որոշեցին.

1. ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար և հաստատել բաժնի 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

2. ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար և հաստատել բաժնի 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

3. Աշխատանքների իրականացնել ուսանողների շրջանում՝ ուղղված ուսման վարձերը սահմանված ժամկետներում վճարելուն:

Ռեկտոր՝

Քարտուղար՝

Ռ. Հակոբյան

Ք. Հայրապետյան

Գավառի պետական համալսարանի
2021 թվականի հոկտեմբերի 29-ի ռեկտորատի նիստի
արձանագրություն թիվ 17

ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ ուսանողական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /զեկուցող՝ ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա. Շահինյան/
2. ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /զեկուցող՝ ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ՝ Ա. Միրիբյան/
3. ՀՀ առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրամանի կատարման մասին ԳՊՀ գիտական խորհրդի 2021թ. սեպտեմբերի 30-ի շրջաբերականի կատարման ընթացքի վերաբերյալ /զեկուցողներ՝ ԳՊՀ ղեկաններ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ/
4. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/Զեկուցող՝ ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա. Շահինյան/

Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա կատարված աշխատանքները: Միաժամանակ նշեց, որ ՈԻԽ-ն ակտիվ համագործակցել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի հետ և համատեղ կազմակերպել ուսանողների և շրջանավարտների հարցումներ՝ ուղղված բուհի ուսումնական, հետազոտական, դաստիարակչական, արտաքին կապերի և այլ գործառույթների իրականացման որակի բացահայտմանն ու բարելավմանը: Բուհի ուսանողական ինքնակառավարման մարմինները մասնակցել են համալսարանի կառավարման գործառույթներին, անդամակցել համալսարանի հոգաբարձուների խորհրդին, գիտական խորհրդին, ինչպես նաև ֆակուլտետների խորհուրդներին:

2. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ՝

Ա. Միրիբյան/

ՈւԲԳԸ նախագահ Ա. Միրիբյանը ներկայացրեց, որ հաշվետու ուստարում ԳՊՀ ռեկտորատի և ֆակուլտետների ղեկանատների աջակցությամբ ապահովվել են ուսանողների ներգրավվածությունը ԳՊՀ գիտահետազոտական, ուսումնամեթոդական աշխատանքներում, ինչը դրսևորվել է ուսանողների կողմից հանրապետության տարբեր կրթական հաստատություններում կազմակերպվող գիտաժողովներին ակտիվ մասնակցությամբ, զեկուցումների ներկայացմամբ, դասախոսների հետ համահեղինակությամբ գիտական հոդվածների հրապարակումներով:

3. **Լսեցին** – ՀՀ առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրամանի կատարման մասին ԳՊՀ գիտական խորհրդի 2021թ. սեպտեմբերի 30-ի շրջափերականի կատարման ընթացքի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ղեկաններ, կառուցվածքային ստորաբաժանումների

ղեկավարներ/

Ներկայացվեցին ամփոփ տվյալներ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրամանի կատարման մասին ԳՊՀ գիտական խորհրդի 2021թ. սեպտեմբերի 30-ի շրջափերականի կատարման ընթացքի՝ ԳՊՀ դասախոսների և վարչական անձնակազմի կորոնավիրուսային /COVID-19/ համավարակի դեմ պատվաստումների, թեստավորումների և դրանց վերաբերյալ փաստաթղթերի ներկայացման ու գրանցման գործընթացի վերաբերյալ: Նշվեց, որ վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շուրջ 70 տոկոսը պատվաստվել է:

4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին – Ընթացիկ հարցեր:

Նախաավարտական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ԳՊՀ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթի մասին: /Զեկուցող՝ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/:

Զեկուցողը կարևորեց ԳՊՀ-ում նախաավարտական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների կազմակերպման գործընթացը, շրջանավարտների նկատառումներն ու առաջարկություններն այդ գործընթացը բարելավելու ուղղությամբ և ներկայացրեց հարցաթերթն՝ ըստ համապատասխան հարցերի հերթականության: Հարցերը քննարկվեցին, արվեցին հարցադրումները հստակեցնող և լրացնող առաջարկություններ:

Որոշեցին.

1. ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ՈԻԽ-ի և ՈԻԳԸ, 2020-2021 ուստարվա գրծունեության հաշվետվություններն ընդունել ի գիտություն և հավանություն տալ զարգացման հիմնական ուղղություններին:
2. ՀՀ առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրամանի կատարման մասին ԳՊՀ գիտական խորհրդի 2021թ. սեպտեմբերի 30-ի շրջաբերականի համաձայն՝ ռեկտորատին պարբերաբար հաշվետվություն ներկայացնել ԳՊՀ դասախոսների և վարչական անձնակազմի կորոնավիրուսի /COVID-19/ դեմ պատվաստումների և թեստավորումների ընթացքի վերաբերյալ:
3. Հաստատել նախաավարտական, մանկավարժական, արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից ԳՊՀ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթը՝ բարելավմանը միտված համապատասխան փոփոխություններով և լրացումներով:

Ռեկտոր՝

Քարտուղար՝

Ռ. Հակոբյան

Ք. Հայրապետյան

Գավառի պետական համալսարանի
2021 թվականի հոկտեմբերի 28-ի ռեկտորատի նիստի
արձանագրություն թիվ 16
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ արհեստակցական կազմակերպության 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /զեկուցող՝ ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ՝ Լ. Միրունյան/
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացի մասին /զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/
3. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2021թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի լուծարային շրջանի մասին /զեկուցող՝ ՀՈԻՖ փոխդեկան Մ. Գարեյան/
4. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** –ԳՊՀ արհեստակցական կազմակերպության 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ՝ Լ.
Միրունյան/

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը կանոնադրական խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով շարունակել է նախորդ տարիներին ձևավորված և ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները համալսարանի աշխատողների և ուսանողների համար: Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհեստակցական կազմակերպությունը առավել ուշադրություն է դարձրել աշխատողների և ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, կորոնավիրուսով հիվանդացած անձանց նյութական աջակցությանը, կորուստներ ունեցած ընտանիքներին ֆինանսական օժանդակությանը: Զեկուցողը շեշտեց 2021-2022

ուսումնական տարում սոցիալական ուղղվածության ձեռնարկների շարունակական իրականացման մասին:

2. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի դասերի ընթացքի մասին:

/Ձեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/

Ներկայացվեց 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի առցանց դասերի ընթացքի, ուսանողների մասնակցության վերաբերյալ ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2021թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի լուծարային շրջանի մասին:

/Ձեկուցող՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Գաբելյան/

Ներկայացվեց ամփոփ տվյալներ ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում լուծարային շրջանի անցկացման մասին:

4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին – Ընթացիկ հարցեր:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթ մասին: /Ձեկուցող՝ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/:

Ձեկուցողը, կարևորելով բուհում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրումը, ներկայացրեց հարցաթերթն՝ ըստ հարցերի հերթականության: Հարցերը քննարկվեցին, արվեցին հարցադրումների հստակեցմանը և հարցաթերթի բարելավմանը միտված առաջարկություններ:

Որոշեցին.

1. ԳՊՀ արհեստակցական կազմակերպության 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն և հավանություն տալ 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններին:

2. ԳՊՀ ռեկտրի հրամանով հայտարարել նկատողություն ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի դասերից անհարգելի բացակայող ուսանողներին:

2. Հաստատել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթը՝ համապատասխան բարելավող փոփոխություններով:

Ռեկտոր՝

Քարտուղար՝

Ռ. Հակոբյան

Ք. Հայրապետյան